մանաքարի վրայ որ ‘‘Սբբիքար” են ասում տեղացիք ‘‘Տապանաքարի մէջ կարդացվում է միայն ‘‘Տէր վարդապետ” բառերը, մնացածները եղծուած են: Իսկ տեղանատան դրան ճակատին դրած է հետեւեալն:

“Ես Տէր Աւազ Շամախեցի,
Որ եմ որդի Կարապետի.
Տեղանատունս շինեցի,
Հանդէպ սորա յօրինեցի,
Տնտեսատուն պատրաստեցի,
Ո՛վ որ սորա մէջն բազմեսցէ,
Թո՛ղ քարով վայելեսցէ,
ՌՄՂԲ թվի”, + (1783):

Քարքանչեցիք աշխատում են նորոգել այս մատուռը, որոյ համար և Կարապետ քահանայն և քանի իշխանք պարապում են: Աստուած յաջողութիւն տայ այս բարի գործին: Յաջողութիւնը տես գրքիս մէջ՝ իւր տեղումն:

Սուրբ Սահակ նահատակ վարդապետի համար Միքայէլ վարդապետ Շամչեան (ի Պատմութեան Հայոց Գ. 120) այսպէս ասէ:

‘‘Գավրիժեցի Յիսուսի վկայն, որ յետ մկրտութեան Խաչատակ կոչեցաւ, հալածեալ ի Պարսից վանն Քրխտոսի, գայ յերկիրն Քաջբերունեաց ի վանս Մեծոփայ, առ Թովմաս վարդապետ առաջնորդ ուխտին, որ է Թովմա Մեծոփեցի պատմագիրն, և մնաց անդ ժամանակ ինչ, և ապա քարոզութեամբ դնացեալ յերկիրն Չիրուանայ ի քաղաքն Շամախի, և քարկոծմամբ նահատակեցաւ վանն Քրխտոսի, յապրիլ 18, ի ՊԿԶ (1417) ամի և յետոյ այրեցին զմարմին սրբոյն, և ի գիշերի ծագեաց լոյս ի վերայ նորա”: Տես և նոտաբեր Հայոց, 1888: յերես 12 և 13. Ղեւոնդ վարդապետի Փիրղալէմեան. և Հ. Իգնատիոս Փափազեանց (յեկեղեցական պատմութեան 1848. դար ԺԵ. Գլ. ԺԹ. յերես 652) ըստ այսմ գրէ: